ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՎՏԱՆԳԻ ՄԵՋ Է. ՀԱՅԿԱԿԱՆ ՓՈՐՁԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Միհրան Դաբաղ[*]

2001թ. սեպտեմբերի 11-ը շրջադարձային էր միջազգային քաղաքականությունում: Դա, հավանաբար, քիչ է առնչվում միջազգային քաղաքական հարաբերությունների իրական-քաղաքական մտադրություններին և նպատակներին. այստեղ նախկինի պես խոսքը քաղաքական շահերի իրագործմանն ուղղված ավանդական հեգեմոնիստական նպատակադրումների մասին է, որոնց այժմ ընդամենը մի փոքր ավելի բացահայտորեն և հարձակողաբար են հետևում, քան վերջին տասնամյակների ընթացքում: Այնուամենայնիվ, կարելի է փաստել միջազգային քաղաքականության քաղաքական փաստարկների և հեռանկարների նոր փուլի մասին:

Իսկապես, այսօր քաղաքական ակտորներն իրենց հայտարարությունների հիմքում ոչ միայն այնպիսի ասպեկտներ են դնում, ինչպես հասարակության ձևավորումն է և պատասխանատվությունը, բայց հաշվի են առնում հնարավորությունն այն բանի, որ իրենք կարող են իրականացնել այդ ձևավորիչ վերափոխումները: Հավակնությունների հորիզոնը, ընդ որում, սահմանափակված չէ ոչ ազգային, ոչ տարածաշրջանային չափմամբ: Խոսքն աշխարհի՝ իբրև ամբողջի, ձևավորման մասին է: XXIդ. սկզբի քաղաքական նախագծերում խոսքը կրկին ինքնության, կայունության և ուժի, բայց առանձնապես կառույցների, կարգի, հիերարխիայի և իշխանական հավակնությունների մասին է:

Միջազգային քաղաքականության հեռանկարների շրջադարձային կետը, որը նման նշանակալի հետևանքներ ունի հայերի կողմից ապագայի որոնման համար, կարող է նկարագրվել հետևյալ կերպ. շրջադարձ աշխարհը (որը ձևավորվել է մի կողմից բազմակողմանի համագործակցությամբ, մյուս կողմից՝ հակամարտություններով) որպես *քաղաքական համատեքստ* հասկանալուց դեպի աշխարհը որպես *գլոբալ հասարակություն (Global Society)* ընկալե-

[*]Դոկտոր, պրոֆեսոր, Բոխումի (Գերմանիա) Ռուրի համալսարանի պատմության ֆակուլտետին առընթեր Սփյուռքի և Ցեղասպանության ինստիտուտի տնօրեն: Ցեղասպանության և պատմական հիշողության, պատմության փիլիսոփայության հարցերին նվիրված գիտական հոդվածների և հրապարակումների հեղինակ:

լը: Այդ հասարակությունում խոսքը հանրությունների և դրանց քաղաքական ձևերի մասին չէ, ոչ էլ պետությունների ու դրանց կառույցների: Հայացքն, ընդհակառակը, ուղղվում է դեպի տարածաշրջաններ և դրանց ռիսկերը: Այսպիսով, խոսքը համաշխարհային քաղաքականության գլոբալ ակտորների և գործունեության գլոբալ դաշտերի մասին է՝ կրկին ու կրկին սպառնալիքների և ռիսկերի մասին:

Ընդ որում՝ արդեն XXդ. 90-ական թթ. կեսին միջազգային քաղաքականությունը որոշող ուժերի հայացքն ուղղվեց դեպի, այսպես կոչված, *համաշխարհային ռիսկերը (World Risks)*, որոնց պետք է դիմակայեն աշխարհի պետությունները. պետության և դեմոկրատիայի թուլությունը փաստելուն զուգընթաց նշվում են նաև այնպիսի գործընթացներ, ինչպիսին են իռացիոնալ գործող «նոր զինված երկրների»[1] *(New Weapon States)* ծագումը, կրոնական արմատականության տարատեսակները, միջազգային ահաբեկչությունը, ռեսուրսների (ջուր, նավթ) գլոբալ դեֆիցիտը կամ կլիմայի փոփոխությունն ու կլիմայական աղետները: Երբ 90-ականների վերջին այդ ռիսկերի մասին բարձրաձայնեցին համաշխարհային քաղաքական կոնֆերանսներում, զուգահեռաբար ի հայտ եկան գործընթացներ, որոնք հուսադրող էին հայկական հիշողության կրողների համար.

- Ինտերնետը դարձավ ոչ միայն եվրոպական հանրությունների միավորման պլատֆորմ, այլև ծառայում է գիտելիքների փոխանակմանը:
- Միջազգային քրեական դատարանի ստեղծումը և նրա ինտենսիվ աշխատանքը նախկին Հարավսլավիայի գծով տրիբունալի շրջանակում խոստանում էր նոր գլուխ բացել ցեղասպանության հանցագործությանը դիմակայելու միջազգային ձգտման մեջ և դրանով իսկ վկայել այն մասին, որ զգայուն վերաբերմունք կա ցեղասպանության փորձի հանդեպ:
- Թվում էր նաև, որ միջազգային դիսկուրսները, այնպիսիք, ինչպիսին են բանավեճերը «կոլեկտիվ հիշողության» կամ «հիշողության մշակույթի» առիթով, զոհերի հիշողություններին, ինչպես նաև իրենց՝ զոհերին խոստանում էին տեղ համաշխարհային պատմության մեջ:

Սակայն պատկերացումը, թե XXI դարից սկսվող համաշխարհային քաղաքականությունն աչքի կընկնի հաղորդակցմամբ և միավորմամբ, ասել է թե՝ նոր բացությամբ, բանականության և պատասխանատվության էթիկայի բարձրացմամբ, ճիշտ չէր: Այս նոր համատեքստում կարևոր է պատկերացնել, թե իրականում ինչ է կրում հիշողությունների և հիշողության մշակույթի շեշտադրումն այն ձևով, որով այն դրսևորվեց քաղաքականության մեջ:

[1] Այսինքն՝ զանգվածային ոչնչացման զենք ունեցող նոր երկրներ (*խմբ.*):

Դեպի XXI դար, նոր գլոբալ աշխարհակարգ տանող ճանապարհը պետք է հենվի պատերազմների և բռնության ընդհանուր հիշողության վրա, որոնք այդքան ուժգին են ազդել XX դարի Եվրոպայի նկարագրի վրա: Քաղաքական այն դիսկուրսների ավելի ակնդետ դիտարկումը, որոնցում «հիշողության» կատեգորիան կենտրոնական կողմնորոշիչն է, արագ ի ցույց է հանում այն, որ պատմական պատասխանատվությունը միայն անուղղակիորեն, զոհերի առջև պատասխանատվության հատուկ ձևի տեսքով է համարվում պատասխանատվություն հալածանքների և բռնության, պատերազմի և աքսորի համար: Մյուս կողմից՝ հիշողության եվրոպական քաղաքականությունը շոշափում է նաև այնպիսի ասպեկտներ, ինչպիսին են իշխանության չարաշահումը, դեմոկրատիայի թերությունները, թշնամու կերպարները քաղաքականությունում: Եթե խոսքը «հիշողության» մասին է, դա սերտորեն կապված է քաղաքականության առանձնահատուկ ձևի հետ: Նման քաղաքականությունում կառուցվում է ընդհանուր, շաղկապող, գլոբալ հիշողություն: Ընդ որում՝ կենտրոնում է հայտնվում ո՛չ առանձին փորձի բազմազանությունը: Ընդհակառակը. հետաքրքրությունն ուղղվում է համընդհանուր նշանակության և ուրույն փորձից ազատագրված «հիշողության» կերտմանը՝ որպես բարոյական հրամայական: Նման ընդհանուր հիշողությունից շատ բան էին սպասում XXIդ. նախօրեին, սակայն Հարավսլավիայի փլուզումը և դրան հետևած պատերազմները, ինչպեսև ռազմական հակամարտությունները փլուզված Խորհրդային Միության տարբեր մասերում, եվրոպական իշխանությունների տեսանկյունից՝ առաջ բերեցին հիմնախնդիր, որն անվանեցին ուրվական (երևակայական սպառնալիք)՝ նկատի ունենալով էթնիկ-ազգային ինքնության նոր կազմավորման ուրվականը, որի համար քաղաքական դիսկուրսներում շուտով գտնվեց «բալկանացում» տերմինը:

Սեպտեմբերի 11-ը միջազգային քաղաքականության մակարդակով հավասարակշռությունը վերջնականապես ուղղեց դեպի նրանց կողմը (հատկապես հարավսլավական պատերազմների համատեքստում), ովքեր մատնանշում էին ոչպետական ազգերի և էթնոսների ինքնության, ինչպես նաև սփյուռքի՝ որպես նոր համաշխարհային ռիսկի քաղաքականության «վտանգը»: Ընդ որում՝ խոսքն «օտարության մեջ, գերազանցապես ազգերի նոր ձուլարանում ապրող և իրենց արմատների մասին իրականությունից բացարձակապես հեռու ֆանտազիաներով մխիթարվող դժգոհ խմբերի մասին է» (մեջբերումը բրիտանացի քաղաքագետ Մերի Քելդորից է, որի «հին» ու «նոր» պատերազմների մասին *[„New and Old Wars. Organized Violence in a Global Era“, Stanford/Cambridge 1999]* վերլուծությունը պետության իշխանական դիրքերի ուժեղացման նոր քաղաքականության հիմքն է հանդիսանում):

Սփյուռք-հանրությունները զգալի վտանգ են ներկայացնում. սրա շուրջ վերջին տարիներին իրենց հետազոտություններում և վերլուծություններում Քեղլորի հետ համաձայնում են բազմաթիվ քաղաքագետներ: Նման հանրությունների «հորիզոնական և ուղղահայաց» կապերը և ինքնության ազգայնական քաղաքականությունը, նրանց կարծիքով, կազմում են այն խմբերի վտանգավոր հատկությունները, որոնք չեն ուզում հնազանդվել պետական սահմաններին: Գերմանացի ազդեցիկ քաղաքագետ Ուլրիխ Շնեկենեն իր նոր վերլուծական աշխատություններից մեկում սփյուռքը դասել է այն խմբերի շարքը, որոնք «խաղաղություն չեն ուզում», և նրանց միանշանակ որակել է որպես «անդորրը խախտողներ»: Նա իր հետազոտությունում հատուկ նշանակություն է տալիս այն բանին, որ սփյուռքի կառույցները, գործունեությունը և վարքագիծը նկարագրի որպես «արմատական» և «եսակենտրոն», այսինքն՝ որպես գործունեություն, որն ուղղված է հիմնականում ինքն իրեն: «Վտանգավոր ակտորների եսասիրական շահերի» *(egoistic interests of risky actors)* հասկացությունը սեպտեմբերի 11-ից հետո ամենից հաճախ օգտագործվող հասկացություններից է միջազգային քաղաքական տեսության մեջ: Այս ֆոնին հայերի՝ ցեղասպանությունը ճանաչելու պահանջը ռետրոգրադ է թվում՝ հենվելով բացառապես սեփական շահերի վրա, խոչընդոտելով Թուրքիայի հետ քաղաքական հաղորդակցմանը և հանգեցնելով կոնֆլիկտների, ընդ որում՝ այսօր այդ կոնֆլիկտներին այնպես են վերաբերվում, ասես դրանք նախապատմություն չեն ունեցել:

Կոնֆլիկտներն, ընդ որում, դիտարկվում են որպես ռիսկի պոտենցիալներ, ինչի ընթացքը կարող է միայն դժվարությամբ գնահատվել: Այսպես, նկատի ունենալով գլոբալ աշխարհի սերտ միահյուսումն ու փոխկապվածությունը՝ հաստատվում է այն բանի վտանգը, որ ցանկացած հակամարտություն աշխարհի ծայրում կարող է սասանել ողջ աշխարհակարգը: Այդ պատճառով արդի քաղաքականության մեջ առաջին պլան են մղվում հակամարտային պոտենցիալների մեղմումն ու կարգավորումը: Եվ հենց դա է այն մեծ սպառնալիքը, որի հետ այսօր բախվում են հայերն ու հայոց պատմությունը:

Եթե միջազգային հանրությունը համառորեն պնդում է, որ Հայաստանը և Թուրքիան պետք է նստեն մեկ սեղանի շուրջ՝ «խոսելու» համար անցյալի և ներկայի մասին, եթե գործընթացից բացառվում է հենց տուժող կողմը, այսինքն՝ հայկական սփյուռքը, ապա դրա հետևում կանգնած է հենց աշխարհիս քաղաքականությունը որոշող իշխանությունների գլոբալ ռազմավարությունը: Այդ ռազմավարությունը ցեղասպանության և դրա սոցիալական հետևանքների (որոնք անդրադարձել են սերունդների վրա) *պատմական հավաստիությունը* վերածում է *քաղաքական տարաձայնության*: Քանի որ քաղաքական նման *տարաձայնությունը*, որն արդյունքում ավելին չէ, քան կարծիքների

ձգձգված անհամաձայնություն, կարող է դառնալ ամենօրյա քաղաքականության մասը: Ընդ որում՝ նման ռազմավարությունն ուղղված է նրան, որ նվազեցնի պոտենցիալ ռիսկերը: Բանակցությունների (ինչը պլանավորում է միջազգային հանրությունը ցեղասպանության մասին հիշողության համար) սեղանի շուրջ խոսքը հաշտության և հնարավոր է՝ նույնիսկ Թուրքիայի կողմից ցեղասպանության խորհրդանշական ճանաչման մասին է՝ «և՛ այո, և՛ ոչ» ձևով[1]: Բայց նման սեղանի կազմակերպումը հետապնդում է մի կարևոր նպատակ, և դա ցեղասպանության ճանաչումը չէ, ոչ էլ այն, որ դադարեն ժխտել այն. նպատակը կոնֆլիկտը մարելն է, որն այլևս չպետք է ստեղծի քաղաքական հիմնախնդիրներ:

Հիմնախնդիրը միայն այդ ռազմավարությունը չէ, որի շրջանակում հայերին հարկադրում են բանակցություններ վարել իրենց պատմության վերաբերյալ: Հիմնախնդիրն այն է, որ այսօր, աշխարհակարգի նոր քաղաքականության ֆոնին համաշխարհային գլոբալ քաղաքականությունում այլևս տեղ չի մնացել, որտեղ կարելի է ուշադրություն հրավիրել նման ռազմավարությունների վրա: Եվ այդ ժամանակ ցեղասպանության պատմական հավաստիությունը հայտարարվում է տարակարծություն երկու պետությունների միջև: Եվ այդ ժամանակ հերքվում է հանցագործի մտածողության գաղափարախոսական բնույթը: Եվ այդ ժամանակ հայերի համառությունն իրենց պատմության առնչությամբ ընկալվում է ոչ որպես իրենց պատմական ինքնության մաս, այլ մեկնաբանվում է որպես անդորրը խախտողի վարքագծի խրոնիկական մոդելի արտահայտություն:

Այսպիսով, ակնհայտ է, որ այդ նոր քաղաքական ռազմավարությունները սեպտեմբերի 11-ից հետո ուղղված են հենց այն հանրությունների դեմ, որոնք բնաջնջող բռնության հետ բախման արմատական փորձ ունեն. դրա մասին հիշեցնելը քաղաքական հռետորականությունը որոշող հիշողության մշակույթի պահանջը դարձավ: Հիշողության քաղաքականությունը, ինչպիսին մենք այն գիտենք այսօր, փորձում է դառնալ հիշողության աբստրակտ մշակույթ՝ ազատագրված հենց այդ հիշողությունը կրողներից, զոհերից և հետագա սերունդներից: Պետք է կերտվի բոլորի համար նույնչափ պարտավորեցնող հիշողություն բռնության փորձի մասին, ընդհանուր զոհերի և հանցագործների համար, չնայած այն բանին, որ զոհերի և հանցագործների փորձը սկզբունքորեն տարբեր է և միմյանց հետ անհամեմատելի, քանի որ նրանք կանգնած են բռնության տրամագծորեն հակադիր երկու բևեռներում:

Հիշողության քաղաքականության՝ զոհերի և հանցագործների փորձը համահավասարեցնող այս ռազմավարության համատեքստում զոհերի և հաջորդ

[1] Այստեղ հեղինակն օգտագործում է «այո» *(ja)* և «ոչ» *(nein)* բառերը համակցող նորաբանությունը մի բառում՝ *„jein“* (ծան.՝ *թարգմ.*):

սերունդների հիշողությունների առանձնահատկությունը, սեփական պատմությունը պաշտպանելը, որը չի տարրալուծվում գլոբալ աբստրակտ հիշողությունում, ընկալվում են որպես բացառիկ և ռեակցիոն համառություն: Սա հատկապես վերաբերում է հայ հանրությանը, որի հիշողությունը ցեղասպանության փորձի մասին վարկաբեկվեց Թուրքիայի կողմից ժխտման հզոր քաղաքականությամբ, որի՝ իր պատմությունը ճանաչելու պահանջը վտանգավոր, կարևոր դաշնակցի և տնտեսական գործընկերոջ հետ քաղաքական հարաբերությունները բարդացնող խոչընդոտ է համարվում: Քանի որ հիշողության մշակույթի պարադիգմը, որը Հոլոքոստի փորձից հետո քաղաքական հրամայական դարձավ, կասկածի տակ դրվել չի կարող, այդ խոչընդոտի հաղթահարման քաղաքական ռազմավարությունն ուղղված է հենց հիշողությունը կրողների դեմ: Եվ այդ ժամանակ Արևմուտքի քաղաքականությունն ուղղված է լինում ոչ թե ընդդեմ քաղաքական ժխտում քարոզող թուրքական ուժեղ ազգային պետության, այլ ընդդեմ հայկական սփյուռքի, որը հետևում է հիշողության հրամայականին և պահանջում հետևել դրան, դրա համար էլ այն գրեթե միաձայն վարկաբեկվում է արևմտյան ԶԼՄ-ում՝ որպես ազգայնական և ծայրահեղական:

Այդ ռազմավարությունը, ոչ վերջին հերթին, իր արտահայտությունն է գտնում երկխոսության պահանջում, որի օգնությամբ ցեղասպանության հավաստիությունը դառնում է կարծիքներ պարզելու հարց: Նման երկխոսությունում ցեղասպանության մասին հիշողությունը պնդելը և ճանաչման պահանջը նույնքան ազգայնական են երևում, որքան ցեղասպանության ժխտումը. դրանով իսկ հիշողությունը և ժխտումը դիտարկվում են զուգահեռաբար: Նման զուգահեռի անցկացումը, ի դեպ, ողջ «բանավեճը» համակում է դիսկուրսով, այնպես, որ այդ համատեքստում արդեն հազիվ թե հնարավոր է գտնել մի որևէ տարր, որը նույնությամբ չվերաբերեր թե՛ «թուրքական նացիոնալիզմին», թե՛ «հայկականին»:

Այսպիսով, մենք այստեղ բախվում ենք նաև Թուրքիայի համաշխարհային քաղաքական գործիչների երկակի ռազմավարությանը, այն է՝ ժխտման պետական քաղաքականությանը զուգահեռ՝ ցեղասպանության մասին դիսկուրսը ռեդուկցիայի ենթարկել, մի կողմից, մինչև քննարկվող տարակարծություններ, մյուս կողմից՝ վարկաբեկել և մարգինալացնել հայկական սփյուռքը՝ որպես այդ փորձի կրող: Այդ ռազմավարությունն ամենավառ կերպով դրսևորվում է Հայաստանի և Թուրքիայի միջև երկխոսություն պահանջելով, որը պետք է ավարտվի հաշտեցմամբ:

«Հաշտեցում» հասկացությունն ընդհանուր առմամբ բավական պոզիտիվ կերպով է ներմուծվում և Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո քաղաքական դիսկուրսում չափազանց կարևոր է համարվում: Եթե նկատի ունենանք «գերմանա-ֆրանսիական հաշտությունը» Երկրորդ համաշխարհա-

յին պատերազմից հետո, ապա կարելի է նույնիսկ խոսել միմյանց ընդառաջելու և մշակութային փոխանակման քայլերի իրականացման կոնկրետ քաղաքականության մասին:

«Հաշտեցումը» պարզապես դատարկ խոսք չէ, որն արտասանվում է հիշարժան տարեթվերի առիթով: Բայց եթե մենք խոսում ենք Թուրքիայի և Հայաստանի մասին, ապա հաշտության միտքն այսօր կարող է քաղաքական ծուղակ լինել:

«Հաշտության քաղաքականություն» ասելով հասկանում են քաղաքական բանակցություններ և ծրագրեր, որոնք պետք է ապահովեն այն, որ հակամարտող կողմերը, ասենք՝ գերմանացիները և ֆրանսիացիները, հայտնվեն բանակցությունների սեղանի շուրջ տեղի ունեցած հակամարտությունից հետո: Հաշտության դեպքում հակամարտող երկու կողմերը պետք է կրկին միմյանց ընդառաջող քայլեր անեն, նրանք միմյանց նկատմամբ պետք է գտնվեն հավասար, սիմետրիկ հարաբերությունների մեջ:

«Հաշտության քաղաքականության» մեջ, այսպիսով, մենք գործ ունենք պետությունների համերաշխության հետ: «Հաշտության քաղաքականությունը» պետք է ծառայի այն բանին, որ փորձելով հարթել հակամարտության առավել սուր անկյունները՝ ապահովվի համագործակցության հնարավորությունը միջազգային մակարդակով, որ վերանա հակամարտության լարվածությունը միջազգային հանրությունում:

Սակայն դժվար, եթե չասենք՝ խնդրահարույց է խոսել հաշտության մասին ցեղասպանությունից հետո: Քանի որ ցեղասպանությունը երկու քիչ թե շատ հավասար դիրքերում գտնվող կողմերի միջև հակամարտության արդյունք չէ: Ցեղասպանության քաղաքականությունը բնութագրվում է հանցագործի կողմից միակողմանի բռնության կիրառմամբ և ուղղորդված կամքով, այսինքն՝ բռնության միանշանակ մտադրությամբ: Այսպիսով, ցեղասպանության դեպքում խոսքը երբեք իրար դեմ կանգնած հակամարտող կողմերի մասին չէ, այլ «հանցագործների» և «զոհերի»: Այս ֆոնին հարց տանք, թե այդ ինչ պայմաններում կարող է հնարավոր լինել «հաշտեցումը» կատարված ցեղասպանությունից հետո: Արդյոք նման հաշտեցման պահանջ հանդիսանո՞ւմ է հանցագործի կողմից իր մեղքի գիտակցումն ու ընդունումը: Հնարավո՞ր է արդյոք ներման և, դրանով իսկ, հաշտեցման հույսը՝ առանց սեփական մեղքի գիտակցման և պատասխանատվության երաշխիքի:

Հավանաբար հնարավոր է, որ նախապես սահմանված «երկխոսություն» և «հաշտեցում» հասկացություններով սկսված գործընթացը, որը բավական նպաստեց Թուրքիայում թեման զգուշորեն բացելուն, այլ ուղղություն ստանա և հանգեցնի ոչ թե այն արդյունքներին, որոնց ուզում էին հասնել այդ ռազմավարության ճարտարապետները, այլ ուրիշ արդյունքների: Դա, սակայն, պետք

է սպասել միայն այն դեպքում, եթե հայկական կողմն ինքը ուշադիր և քննադատական հայացք ուղղի հասկացություններին և ռազմավարություններին:

Այսպիսով, սկզբում կարևոր է փաստել. եթե այսօր խոսքը Հայաստանի և Թուրքիայի հաշտեցման մասին է ցեղասպանության հարցով, քաղաքական հաշտության մասին նախնական միտքը պետք է ռազմավարական առումով երկրորդ պլան նահանջի: Եթե Գերմանիայի առնչությամբ մենք խոսում ենք Հոլոքոստի համակողմանի հետաքննության մասին, ապա մենք գործ ունենք *պատմության վերիմաստավորման*[1] աշխատանքի հետ: Նման վերիմաստավորումն ու հիշողությունը նշանակում են, որ հարկավոր է վարժվել այն բանին, որ զոհերի և հանցագործների միջև սահմանը կմնա ընդմիշտ: Հաշտեցումը Գերմանիայում նշանակում է նաև հաշտություն փնտրել հանցագործի իր անցյալի հետ, այսինքն՝ ընդունել իր անցյալը որպես հանցագործ: Սակայն եթե պահանջում են երկխոսություն Հայաստանի և Թուրքիայի միջև, ապա նկատի են ունենում բանակցությունները պատմության շուրջ այն առումով, որ ճանաչման և վերիմաստավորման աշխատանքի փոխարեն հաշտեցումը դնեն:

Ի՞նչ է մնում անելու նման գործընթացներին և հզոր, համալիր ռազմավարություններին դեմ-հանդիման:

Սկզբում կարևոր է չկորցնել արիությունը և հետևողականորեն շարունակել պնդել, ինչպեսև գիտակցված ու հստակ ձևակերպել սեփական դիրքորոշումը: Մենք պետք է անենք այն, ինչից զգուշանում են գլոբալ աշխարհակարգի ուժեղ պետությունները, որոնք մտահոգված են նրանով, որ իրենց տանն անդորր լինի, չդադարենք մեր հավակնությունները ներկայացնել քաղաքականության մեջ գործունեության տարածք ունենալու համար: Ընդ որում՝ պետք է գիտակցվի վերը նկարագրված պարադիգմի փոփոխությունը միջազգային քաղաքականության ռազմավարությունում, և սա հաշվի առնելով՝ պետք է ճշգրտվեն մեր սեփական ռազմավարությունները: Այստեղ սփյուռքին հատուկ դեր է վերապահվում: Որովհետև աշխարհակարգի նոր քաղաքականության համատեքստում Հայաստանի Հանրապետությունից՝ որպես փոքր պետությունից աշխարհաքաղաքական կարևոր տարածաշրջանում, պահանջվում է ենթարկվել ազգային պետությունների գործողությունների տրամաբանությանը: Իսկ Սփյուռքը, որն իր ապակենտրոնացված և միմյանց շաղկապված կառույցների պատճառով ներկայացված է աշխարհի տարբեր կետերում, կարող է խախտել գործողությունների այդ տրամաբանությունն իր հեգեմոնիստական հարկադրմամբ և դառնալ քաղաքականապես նշանակալի:

[1] Օգտագործվում է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընդունված *«Aufarbeitung»* (վերամշակում) հասկացությունը, որն ընդհանրացնում է Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Գերմանիայի բռնության և ագրեսիայի փորձի հետ աշխատանքի ողջ համալիրը, որը ներառում էր ինչպես տեսական, մտավոր աշխատանքը, այնպես էլ գործողությունները մշակույթի և կրթության ոլորտներում (ծան.՝ *թարգմ.*):

Սփյուռքը կարող է ազդել համապատասխան կառավարությունների քաղաքականության վրա, այն կարող է պաշտպանել սեփական պատմության և հիշողության իր իրավունքը, կարող է, ի տարբերություն ազգային պետության, այլ կերպ առարկել այն փաստարկին, թե դրանով կանգնում է դաշնակցային-քաղաքական հաշվարկի կամ համաշխարհային ֆինանսական շուկաների ճանապարհին:

Այդ տարբերությունը մի կողմից ազգային պետության և մյուս կողմից՝ սփյուռքի գործունեության տարածքում հանգեցնում է սփյուռքի՝ վերը նկարագրված ակտիվ վարկաբեկմանը՝ նպատակ ունենալով այն բացառել գործընթացներից: Իզուր չէ, որ երկխոսությունը մշտապես առաջարկվում է միայն Հայաստանի Հանրապետությանը՝ աշխարհիս քաղաքականությունը որոշող իշխանությունների վարքագծի տրամաբանությունից ելնելով:

Սակայն համաշխարհային քաղաքականությունը հասկանալու և դրա վրա ազդեցություն գործելու համար անհրաժեշտ է գիտենալ դրա կոնցեպտները և հասկացությունները, ինչպես նաև ապրել դրա կենտրոններում: Միայն շնորհիվ համաշխարհային կենտրոններում ունեցած մեր սեփական ձայների մեզ այսօր կհաջողվի տեղ գրավել հայկական հիշողության, հայկական շահերի և հայկական ապագայի համար: Այդ և միայն այդ ժամանակ հնարավոր կլինի բացատրել գալիք սերունդներին, թե ինչու է կարևոր դիմադրել համաշխարհային քաղաքականությանը: Հենց այն պատճառով, որ սփյուռքի ապակենտրոն կառույցը պարտադիր պայման է աշխարհի տարբեր կենտրոններում տարբեր դերերով և տարբեր հնարավորություններով գործելու համար: Ապակենտրոն այդ կառույցը չպետք է թուլանա: Ընդհակառակը, այն պետք է հզորանա, իսկ նրա կապերը պետք է բարելավվեն:

Ընդ որում՝ մենք պետք է գիտակցենք, որ հարցը, որն այսօր դնում ենք՝ ի՞նչ է անհրաժեշտ անել, որպեսզի հայերի համար ապահովվեն իրենց տեղն աշխարհում և ներկայությունն ու մասնակցությունը քաղաքականությունում, նոր չէ, և հարց է, որն ուղեկցել է մեզ միշտ: Իրականում, հարյուրամյակներ շարունակ յուրաքանչյուր նոր սերունդ վերստին արել է այս հարցադրումը: Եվ հայերի ապագայի առնչությամբ մշտապես երկու պատասխան է եղել. մեկը՝ հայրենիքի, մյուսը՝ օտարության մեջ գտնվող բազմաթիվ հանրությունների համար: Այս երկու հենարանները մենք պետք է զորեղացնենք հավասարապես: Մենք պետք է կազմավորենք գիտելիքի ցանցեր և այդ ցանցերի միջոցով ակտիվորեն ներգործենք քաղաքականության վրա: Եվ դա՝ ոչ միայն հօգուտ մեր «սեփական» կամ «եսասիրական» շահերի: Բայց այսօր հետապնդվում է նաև մեզ պետական նոր հեգեմոնիաներին ու նացիոնալիզմներին հակադրելու նպատակը:

Այն ժամանակ, երբ ազգային պետություններն իրենց կողմն են հավաքում բոլոր իրավունքներն ու իրենց հռչակում են գիտելիքի պահապան, անվտանգության, առողջության և իրավունքի պաշտպան ու երաշխավոր, սփյուռք-հանրությունը ոչ միայն հին պատմություն, այլև ինքնաքննադատական անցյալ ունի: Ուստի, հենց սփյուռքը կարող է հայտարարել աշխարհի պատմության ներաձության համահեղինակության իր իրավունքի մասին, պատմություն, որը վերստին կգրվի գլոբալացման դարաշրջանում: Խնդրանքների և ճանաչման ժամանակը սպառվում է, որովհետև գլոբալ աշխարհակարգը կպահպանվի «ուժեղ պետությունների» *(strong states)* հաստատուն պատվարով: Եվ մեր խնդիրն այն է, որ այդ պատվարում լինենք որոշիչ և անգաժավորված պոտենցիալ՝ հասնելու համար այն բանին, որ հայկական սփյուռքը հաստատի հայոց պատմությունը համընդհանուր գիտելիքի և դրանով իսկ՝ քաղաքականության մեջ. սեփականություն, որը ենթակա չէ բանակցությունների:

Ուստի, մեր կարծիքով՝ մենք պետք է վերստին հայեցակարգենք մեր գործողությունները մինչև 2015թ., որպեսզի կարողանանք ծավալել հայկական փորձի մասին դիսկուրսը, որն այսօր կարող են խլել այն կրողների ձեռքից: Դա նշանակում է, որ ցեղասպանության մասին դիսկուրսը պետք է հանվի այն այսօր որոշող «Ցեղասպանություն-Այո-կամ-Ոչ» փակ շրջանակով բանավեճից, որտեղ զոհը, իջեցվելով մինչև հակամարտության կողմի կարգավիճակի, արդյունքում ենթարկվում է ժխտման իշխանությանը և խցկվում է հանցագործի տրամաբանության մեջ: Ուստի, հայերի համար, ոչ վերջին տեղում, նշանակություն կունենա իրենց պատմության և փորձի ինտելեկտուալացումը: Այս ասելով հասկանում ենք այն, որ հայկական փորձը պետք է ենթարկվի ռեֆլեքսիայի, և նրա նշանակությունը պետք է հետազոտվի մտածողության, հասարակական հարաբերությունների, անհատի, էթիկայի և քաղաքականության հիմնարար ասպեկտների համար: Այսպիսով, այդ փորձի ակտուալությունն ընդհանուր գծերով կարող է պարզաբանվել անհատական և կոլեկտիվ գոյության հիմնախնդիրների համար, և աշխատանքը հայկական փորձի հետ կարող է պաշտպանվել նացիոնալիզմի կամ թաքուն վիրավորանքի նախատինքներից: Մեր կարծիքով՝ կարևոր կլիներ, օրինակ, վերականգնել և շարունակել հայկական փորձի իմաստավորման գրական, գեղարվեստական և փիլիսոփայական այն բազմահեռանկար աշխատանքները, որոնք սկսվել էին XXդ. 20-ական թթ.: Ընդ որում՝ պարզ պետք է լինի այն, որ մենք այստեղ գործ ունենք արդի բնորոշ փորձի (որը դուրս է գալիս հայկական առանձնահատկության սահմաններից) չափազանց բնութագրական և ընդարձակ ռեֆլեքսիաների հետ:

Այն, թե ինչպես կարող են իրականացվել այդ սկզբունքային գաղափարները, կուզենայինք ցույց տալ որոշ, հավանաբար՝ ոչ սպառիչ, կոնկրետ առաջարկություններով.

- Պատմական հետազոտության աջակցություն, որն այլևս չպետք է կենտրոնանա ապացույցների որոնման վրա կամ սահմանափակվի դրանով, այլ պետք է ուշադիր քննի Օսմանյան կայսրությունում հայերի բնաջնջման առանց բացառության բոլոր ասպեկտները (նախապատմություն, իրագործման կառույցները, գաղափարախոսական ասպեկտները, հանցագործների հետախուզումը)։ Դրանով իսկ կարող է ստեղծվել այդ հարցի վերաբերյալ վկայությունների որոնման անհրաժեշտությունից ազատված, բազմապլան և հանգամանալի աշխատանքի շրջանակը։
- Միջդիսցիպլինարության աջակցություն ցեղասպանության և նրա հետևանքների հարցի շուրջ աշխատանքում։ Հարկ է, որ մտածվի նաև այն մասին, որ այլ գործոնների թվում գործի դրվեն սոցիալական հոգեբանության, սոցիոլոգիայի, տրավմաների հետազոտության, գրականագիտության և գեղարվեստական պատմության հեռանկարները։
- Հետազոտական և գիտական թոշակների սահմանում այն գիտնականների համար, որոնք զբաղվում են ցեղասպանության հիմնախնդրով։ Նպատակասլաց հետազոտական քաղաքականության և աջակցության ապահովման համար հարկ է մտածել հատուկ ֆոնդի ստեղծման մասին։
- XXդ. 20-ական թթ. գրականությունում հայկական փորձի վերաբերյալ գրական խորհրդածությունների թարգմանություններ և վերահրատարակումներ։

Վերջին հաշվով, ցեղասպանության հիշողությունը և այն ճանաչելու պնդումը կարելի կլիներ վերացնել ելակետային քաղաքական պահանջի առաջնային պլանից և, ոչ վերջին հերթին, հակազդել ցեղասպանության դիսկուրսի քաղաքական ինստրումենտալացմանը, որը նկատվում է պահանջվող «երկխոսաբանությունում»։

Ավելին, վերը նկարագրված ակտուալ համաշխարհային քաղաքական գործընթացների ֆոնին չափազանց կարևոր է, որ ապագայում, մեր ռազմավարությունների հայեցակարգերը կազմելիս, կոնֆերանսներում, լսումների ժամանակ մեր պահանջները ձևակերպելիս (փոխհատուցում, ռեպարացիաներ և այլն) մենք խորհրդակցեինք գլոբալ քաղաքական գործընթացներին և հասկացությունների մեկնաբանություններին քաջատեղյակ գիտնականների և քաղաքական գործիչների հետ։

Եկել է ժամանակը, երբ բարոյականության կանխադրույթի տեղը, որը մինչ այժմ պայմանավորում էր մեր ջանքերը, պետք է զբաղեցնի գիտելիքը։ Դա անհրաժեշտ նախապայմանն է այն բանի, որ հնարավորություն ունենանք որոշիչ կերպով միջամտելու դիսկուրսին և մեզ վերադարձնելու հասկացությունների (կատեգորիաների) նշանակության որոշման նկատմամբ իշխանու-

թյունը: Միայն այսպես մենք կկարողանանք, ըստ իս, հաղթահարել մուրացիկի վիճակը և ազատագրվել երրորդ կողմերից եղած կախվածությունից (ինչում ինքներս ենք մեղավոր), որոնք այնքան լավ են զգում իրենց «ռացիոնալ, օբյեկտիվ միջնորդի» դերում:

Սեպտեմբեր, 2010թ.

ПАМЯТЬ В ОПАСНОСТИ. АРМЯНСКИЙ ОПЫТ В КОНТЕКСТЕ НОВОЙ МЕЖДУНАРОДНОЙ ПОЛИТИКИ

Мигран Дабаг

Резюме

Путь в XXI столетие, в новый глобальный мировой порядок должен основываться на общей памяти войн и насилия, которые так сильно повлияли на облик Европы в XXв. При более пристальном рассмотрении политических дискурсов, в которых категория памяти является центральным ориентиром, быстро выясняется, что историческая ответственность только косвенно, в форме особого вида ответственности перед жертвами, является ответственностью за преследования и насилие, войны и выселения. С другой стороны, европейская политика памяти затрагивает также такие аспекты, как злоупотребление властью, недостатки демократии, образы врага в политике. Если речь заходит о памяти, это тесно связано со специфической формой политики. В такой политике конструируется общая, связующая, глобальная память. На первый план современной политики выходит смягчение и урегулирование конфликтных потенциалов, и как раз это является большой угрозой, с которой сегодня сталкиваются армяне и армянская история.